28.05.2017թ.

Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի շնորհավորանք-ուղերձը Մայիսի 28-ի առթիվ

Հարգելի համաքաղաքացիներ

Մայիսյան տոնացույցն ամփոփվում է առաջին Հանրապետության օրով, որը մեր ժողովրդի համար պատմական ու կարևորագույն իրադարձություն է:

Հայոց պետականության վերականգնման տոնը հայ ժողովրդի նվիրական երազանքների ու դարեր շարունակ անկախություն երազած ժողովդրի հանգրվանն է, որը միաժամանակ միասնականության, հավաքականության խորհուրդն է ամփոփում իր մեջ:

Առաջին Հանրապետությունը ծնվեց և հզորացավ Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի և Սարդարապատի հերոսամարտերով, ծնվեց մեր ժողովրդի համար բարդ ու ճակատարագրական ժամանակահատվածում:

Ու չնայած ընդամենը երկուսուկես տարի գոյատևեց մեր փայփայած պետականությունը, սակայն վերականգնվեց հայոց անկախության ընթացքը, ու այլևս հնարավոր չէր պատմության անիվը շրջել:

Առաջին պետությունը կատարեց իր պատմական առաքելությունը և հայ ժողովրդին փրկեց կործանումից, հուսահատությունից: Սա նոր կյանքի, պետականությունը վերագտնելու ճանապարհին լուրջ ու հիմնարար քայլ էր, որը հայ ժողովրդի լավագույն զավակների հերոսական ջանքերի, խիզախումների ու նաև կյանքի գնով դարձավ իրողություն:

Դարեր շարունակ պետություն ու պետականություն չունեցող ժողովուրդը կարողացավ թոթափել իր ուսերին դրված մեծ բեռը և 1918թ. ոչ միայն ինքնակազմակերպվեց, այլ նաև ստեղծեց պետություն:

Սա բոլորիս հավաքականության, միասնության, անկախության նվաճման օրն է:

Սիրելի համաքաղաքացիներ

Շնորհավորում եմ բոլորիս այս հիանալի տոնի՝ Մայիսի 28-ի առթիվ, ցանկանում եմ, որ բոլորս կրողը լինենք մեր լավագույն արժեքների և ձեռքբերումների և հավատանք, որ մեր ժողովուրդը միայն անկախության պայմաններում և իր պետության մեջ կարող է կերտել իր և իր զավակների ապագան, զորություն սատանա իր հողից և իր աշխատանքով զորացնի իր երկիրը: